էլ իրենց անզոր էին համարում ծանր հիվանդին սպառնացող մահից բժշկությամբ կամ խնամատարությամբ փրկելու համար[84]։

Մահը նկատվում էր որպես կոնկրետ, իրական, նյութապես գոյություն ունեցող հոգու մարմնից շնչի հետ միատեղ հեռացում։ Հենց որ մեռնողը շունչը փչում էր, տան դուռը լայն բաց էին անում, որ հոգեհան հրեշտակը փակ չմնա և կարողանա ազատ հեռանալ հոգու հետ միասին։ Հոգեվարքի միջոցին մանկանը սենյակից դուրս էին տանում անշուշտ այն երկյուղից դրդված՝ չլինի՞ թե հեռացող հոգին նրան էլ հետը տանի[85]։ Միջոցներ էին ձեռք առնվում, որ հոգու հեռանալուց հետո դատարկված մարմնի մեջ չտեղավորվի չար ոգին։ Հավանական է, որ այդ մտայնությամբ պետք է բացատրել այն, որ ննջեցյալի ծնոտը բռնելով կամ կզակի վրայով թաշկինակ կապելով, աշխատում էին, որ բերանը փակ մնա։ Պատարագից հետո նշխարքը խնկի հետ դնում էին նրա բերանին, պնչերն ու ականջները խցանում էին բամբակի կամ պատանքի անլվա կտորի մեջ փաթաթված խնկով։ Խունկ ծխելը, ինչպես հայտնի է թե՝ Հայաստանում, նաև՝ Հունաստանում և թե՝ առհասարակ արևելքում, համարվում էր չար ոգիներին վանող և բարի ոգիներին գրավող միջոց։ Չար ոգիներից ննջեցյալին պաշտպանելու նպատակով էր, որ պատանքելուց հետո երբեմն նրա կրծքին դնում էին հաց, որը նույնպես չարից պաշտպանելու զորություն ուներ։ Գուցե նույն բացատրությունը պետք է տալ նաև այն սովորությանը, որով պահանջվում էր ննջեցյալի ձեռները խաչաձևել նրա կրծքին, դեռ բաց գերեզմանի գլխին բահն ու թիակը դնել խաչաձևած. երկու դեպքերումն էլ չար ոգիների մերձենալն ու ներթափանցելը խաչով արգելելու համար[86]։ Խաչը տաբու դնելու նշան էր։ Նույն զորությունը պիտի վերագրել և այն խաչաձև կտրած կտորին—վարշամակին, որը պատանք կարողը եկեղեցում կարգը կատարելուց հետո ձգում էր ննջեցյալի երեսին, և միայն դրանից հետո էին վերջնականապես կարում պատանքի բաց թողած մասը։ Նույնպիսի տաբուի՝ չարքիցն արգելելու, նրանից պաշտպանելու նշանակություն ուներ և այն խաչը, որով քահանան կնքում էր ննջեցյալի թարմ գերեզմանը։ Խաչի այսպիսի ըմբռնումով հասկանալի է դառնում և հետևյալ դարձվածքը՝

«Խաչ դիր այս կամ այն ցանկությանդ կամ մտադրությանդ վրա»[87]։ Համոզված էին, իբր խաչը կապում էր, անշարժ, անձեռմխելի, անիրագործելի էր պահում այդ ցանկությունը, մտադրությունը։

Մահ պատճառողը չար ոգին էր, որի մերձենալուց մարդու մարմինը պղծվում՝ կեղտոտվում էր և այդ պղծումից, կեղտից մարմինը պետք էր մաքրել, այնպես ինչպես առհասարակ այլ դեպքերում կեղտոտված մարդն է մաքրվում, այն է ջրով լողացվելով։

Մեռելին լողացնում էին տանից դուրս։ Միայն արտակարգ ցրտերի ժամանակ կարելի էր տան մեջ մի հեռու անկյունում, մի առանձնացած տեղում

---

[84] Տե՛ս Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 100. տե՛ս նրա համապատասխան հատվածները թե՝ այդ աշխատության և թե՝ «Սիսիանի» մեջ։

[85] СМОМПК, вып. XIII, отд. I, էջ 114։

[86] Այդ նպատակով Ղուբայի շրջանի լեռնցիները խաչ էին քաշում իրենց մթերքների ամանների երեսին։ Նույն նշանակությունն է ստանում բրշտոտելու՝ հորանջելու միջոցին բացած բերանը խաչակնքելու սովորությունը, ինչպես և քրիստոնյաների մեջ տարածված երեսն ու կուրծքը խաչակնքելը, պատարագից և առհասարակ եկեղեցական արարողությունից հետո Ավետարանի կամ խաչի շարժումներով ցրվող հասարակությանը քահանայի կողմից խաչակնքելը։

[87] «Բոլորովին հրաժարվի՞ր նրանից»։